ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՀՀ մշակույթի նախարարության մշակութային ժառանգության և ժող. արհեստների վարչության գլխավոր մասնագետ Նազիկ Հովասափյան

ԵՐԿԻՐ/ՔԱՂԱՔ/ԺԱՄԿԵՏ

Ալեքսանդրիա (Եգիպտոսի Արաբական Հանրապետություն)

2019 թ. հունվարի 28-30-ը

- ՆՊԱՏԱԿԸ

Քննարկելու Ալեքսանդրիայի գրադարանի փնտրտուքի հետ երկու երկրների ազգային գրադարանների և համապատասխան գերատեսչությունների ազգային ժառանգության պահպանության, վերականգնման և թվայնացման ոլորտի մասնագետների միջև փորձի փոխանակման, հրատարակությունների փոխանակումների, մասնագիտական դասընթացների, սեմինարների, աշխատաժողովների և միջազգային համաժողովների կազմակերպման մանրամասները:

- ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ/ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

- Հունվարի 28-ին այցելել եմ Ալեքսանդրիայի Հայ առաքելական եկեղեցու Առաջնորդարան, հանդիպել համայնքի ներկայացուցիչների հետ, ներկայացրել եմ Հայաստանի ազգային գրադարանի հիմնադրման պատմությունը, առաքելությունը, գործառույթները, «Մելքոնեան» հիմնադրամի ունեցած ներդրումը գրադարանի թամանյանական մասնաշենքի կառուցման գործում:

- Հունվարի 29-ին Ալեքսանդրիայի Հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Գրիգոր Մուրադեանի ուղեկցությամբ այցելել եմ Ալեքսանդրիայի գրադարան:

Գրադարանի պատասխանատուների կողմից գրադարանում կազմակերպվել է հինգժամյա շրջայց, որի ընթացքում ներկայացվել է գրադարանի բաժինների աշխատանքը, կառուցվածքը, գրադարանի ենթակայության տակ գտնվող և տարածքում գործող թանգարանների աշխատանքը: Գրադարանի տնօրեն Մուստաֆա Էլֆեկի, գրադարանի արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ Շերիֆ Ռիադի և հանրային կապերի բաժնի վարիչ Հեբա Էլ Ռաֆեյի հետ հանդիպման ժամանակ, քննարկել եմ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպիսիք են համատեղ ցուցահանդեսների, համաժողովների և աշխատանքային հավաքների անցկացման հեռանկարները, համատեղ տեղեկագրերի հրատարակումը, գրադարանագիտության բնագավառում մասնագետների փոխանակումը: Ալեքսանդրիայի գրադարանին նվիրել եմ հայ-եգիպտական և հայ-արաբական առնչություններին վերաբերվող արժեքավոր գիտական գրականություն, «Հայաստանի ազգային գադարանի գանձերը» ալբոմային հրատարակությունը, ինչպես նաև Հայաստանին վերաբերող այլ ալբոմային հրատարակություններ:

- Ծանոթացա Ալեքսանդրիայի գրադարանի հայկական հավաքածուի հետ: Գրադարանում չկան հայերեն ձեռագրեր: Գրադարանի հայ գրքի հավաքածուն խնամված է, քարտագրված, վնասված և քայքայված գրքերը բուժված են և վերականգնված: Հայերեն հավաքածուում մեծ թիվ էին կազմում Վենետիկի Մխիթարյան միաբանության կողմից հրատարակված գրքերը: Ալեքսանդրիայի գրադարանի ղեկավարությունը հանձն առավ օգնություն ցուցաբերել Հայ առաքելական եկեղեցու Առաջնորդարանի գրադարանի գրքերի վերականգնման և բուժման հարցում:

- Տնօրեն Մուստաֆա Էլֆեկիին հրավիրեցի Հայաստան: Հրավերը ընդունվել է, այցի ժամկետները կորոշվեն Ալեքսանդրիայի գրադարանի պատասխանատուների հետ քննարկումների ընթացքում:

- Հունվարի 30-ին այցելեցի Ալեքսանդրիայի Հայ առաքելական եկեղեցու գրադարան: Այս պահին գրադարանի տարածքներում ընթանում են վերանորոգման աշխատանքներ: Գրադարանը մեծ չէ, գրքերը քարտագրված չեն: Գրադարանի պատասխանատու Տեր Գրիգորը հանձն առավ, որ տարածքների վերանորոգումից հետո, գրքերը կփոշեհանվեն, գրքերի բուժման և ախտահանման նպատակով կդիմեն Ալեքսանդրիայի գրադարանի մասնագետներին:

- **ԱՌԱՋԱՐԿՆԵՐ**

Նկատի առնելով Հայաստանի Հանրապետության մշակույթի և Եգիպտոսի Արաբական Հանրապետության ներդրումների և միջազգային համագործակցության նախարարությունների միջև կնքված փոխըմբռնման հուշագրի դրույթները, ինչպես նաև Ալեքսանդրիայի գրադարանի ցուցահանդեսային և համերգային տարածքների հասանելիությունը հանրության լայն խավերին, արդեն իսկ սկսված գործընկերային հարաբերությունները, առաջարկում եմ կազմակերպել «Հայաստանի մշակույթի օրեր Եգիպտոսում», որի ընթացքում կկազմակերպվի հայ հնատիպ գրքի և ձեռագրերի ցուցադրություն Ալեքսանդրիայի գրադարանում, համերգներ (դասական երաժշտություն՝ Կոմիտասի քառյակի մասնակցությամբ, ազգային երգ ու պար) Կահիրեում և Ալեքսանդրիայում, մասնակցություն Ալեքսանդրիայի գրադարանում անցկացվող գրքի 15-րդ միջազգային տոնավաճառին (2019 թ. մարտի 25 – ապրիլի 7) :

Նազիկ Հովասափյան